

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ՀՈՒՄԻԿ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՄԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ

(10 փետրվարի 2002 թ.)

«Յանուն Հօր ևս Որդոյ ևս Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում... այլ հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից» (Մաղմ. Ա 1):

Սիրելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ, մայրեր ու հայրեր.

Այսօր Բուն Բարեկենդան է, փարվա հինգ փաղավար փոներից Ս. Ծննդյան, Պայծառակերպության, Ս. Աստվածածի և Ս. Խաչի հինգօրյա պահոց բարեկենդանների համեմատությամբ, ամենից երկարատևն ու կարևորը հավաքացյալի համար քառասունօրյա պահեցողությանը նախորդող: Հայ Եկեղեցին շատ գեղեցիկ անուններով է կոչել յուրաքանչյուր կիրակին՝ Բուն Բարեկենդանն այսօր է, հաջորդը՝ Արարքաման, Անառակի, Տնտեսի, Դարավորի ու Գալստյան կիրակիներ: Մեր նախնիներն իրենց հոգու ջերմությամբ հոգևոր կապ են դրել Մեծի Պառհոյակի վեց կիրակիների միջև. մեկ կիրակիի նշանակությունն ու խորհուրդը է՛լ ավելի է բացատրվում և հասկանալի դառնում հաջորդող կիրակիների խորհրդով: Այսպես, եկող կիրակի՝ Արարքաման. նախամարդն Ադամ մեղք գործեց և արարքսվեց: Հաջորդող կիրակին Անառակի կիրակին է: Մի հոր երկու որդիներից կոտորեց իր ազապ կամքով իր բաժինը ուզեց ու գնաց օտար աշխարհ: Այսպես երկար մնալուց հետո գոջաց րնից հեռանալու համար, ապաշխարեց ու եկավ իր հոր մոտ ամոթով, կսկիծով ասելով. «Հայր, մեղայ յերկինս ևս առաջի քո», այսինքն՝ արարքսմանը հաջորդում է գոջումը, որը նշանակում է, թե Աստված չի կամենում, որ մարդը մեղավոր մեռնի, այլ կամենում է նրան դուրս բերել իր այդ մեղքից: Նշված կիրակիներից յուրաքանչյուրը ներկայացնում է մարդկային հոգու փխուր պայրկերը ու ողբերգական հոգեվիճակը, և թե ինչպես ազատագրել մեղքի ճիրաններում փառապող մարդուն:

Մեր Սուրբ Եկեղեցին հասարակել է գոջումը, պահեցողությունը և ապաշխարությունը, որպեսզի մեղավոր մարդը կարողանա այդ քառասուն օրերի ընթացքին ադոթքով, գոջմամբ ու ապաշխարությամբ ամրապնդել և կոպիլ իր անձը, հոգեկան փառապանքից ազատագրվել ու դեպի Աստված դառնալ, իր իղձը կատարել Հիսուս Քրիստոսի փրկական զորությամբ: Հեթանոսական Բուն Բարեկենդանը, որ ոչ մեկ

կապ չունի քրիստոնեականի հետ, նշանակում է բարի կենդանություն, խրախճանքների ճոխ սեղաններով առաքյալ ուրեղիքների օր, երբ կապարվում են դիմակավոր խաղեր, զբոսանքներ: Անգամ վանքերում են կապարվել բարեկենդանի հեթանոսական փոնակապարություններ՝ ազատություն փայլով վանականներին կերուխումի ու մասնակցելու այդ զվարճանքներին, այդ օրը կոչվել է «աբեղաթող», որը հիմա չկա:

Քրիստոնեական շրջանում քրիստոնյա ժողովուրդը որոշ հեթանոսական փոնակապարություններ պահել է՝ փալով նրանց քրիստոնեական նշանակություն կամ բովանդակություն՝ առանց Եկեղեցու կանոնական որոշումի: Մեծ է եղել, սակայն, Բուն Բարեկենդանը, որ հայ ժողովրդի համար իր հոգևոր ու կրոնական կարևոր նշանակություն է ունեցել: Հայ Եկեղեցին նախամարդո՝ Ադամի դրախտում անցկացրած անանցելի ու երանելի օրերը համարել է Բուն Բարեկենդան, որին նվիրված շարականները պատմում են, թե Ադամը ինչպես սրբեղծվեց Աստուծո՝ ապրելով դրախտի փափկության մեջ. «Յնծայր զուարճացեալ անդխրական խնդութեամբ»: Ադամը միշտ ներկա է եղել Աստծո առաջ, դրախտի զվարճությունը Ադամին երջանիկ է դարձնում հավերժօրեն. այսինքն Երկնային Արքայության մեջ:

Բուն Բարեկենդանի շարականները Քրիստոնյա մարդկանց հիշեցնում են դրախտի երջանկության հոգևոր կյանքը: Ինչպես ասվում է Աստվածաշնչի «Շննոց գրքի» մեջ, Ադամը սրբեղծվել է Աստծո պարկերի նմանությամբ: Ադամի կյանքը դրախտում, ըստ շարականագրի, նման էր մի տեսակ պահեցողության. «Որ զօրէնս սրբութեան նախ ի դրախտին աւանդեցեր»: Ափսո՛ս, երկար չընկնեց Ադամի երանական կյանքը դրախտում: Աստված նրան պարվիրել էր չճաշակել գիտության ծառի պլուրդից: Դա մի սպուգում էր, թե Ադամը պիտի մնա՝ Աստծու հրամանին հավաքարիմ:

Փորձությունը եկավ, և Ադամը դարձավ օրինազանց: Դրախտում կապարվեց առաջին զանցանքը, որին հետևեց անխուսափելի պարիժը: Ադամը Դրախտից արտաքսվեց, նա զրկվեց հոգեկան անմեղությունից, դրախտային երջանկությունից, դադարապարվեց իր քրոնիքով իր հացը ուրելու և, վերջապես, ճաշակեց մեղքի ու մահվան դառնությունը: Նրա հանցանքով մեղքն ու մահը աշխարհ մտան:

Ադամի այս ողբերգական պատմությունը պատմությունն է մեղանշական մարդկության: Ահա թե ինչու այսօրվանից մեր Եկեղեցին և համայն հայ հավաքացյալները սգո մեջ են քառասուն օր, քանզի մեր նախահայրը՝ Ադամ, արտաքսվեց: Քաշվել են Սուրբ Մեղանների վարագույրները, Սուրբ Պատարագները մատուցվում են փակ խորաններում փրփմաթախիժ ու հուզումնալից, Սուրբ Հարության հաղթական շարականների փոխարեն երգվում են Մեծի Պահոց համար գրված շարականները:

Քրիստոս անապատում անցկացրեց քառասուն օր ծոմապահությամբ և աղոթքով: Տերն այնպեղ սանձեց բերանը փորձիցին՝ սափանայի, ասելով. «Երիս գնա, սափանա», այդ փորձությունից հաղթական դուրս գալով Քրիստոս շարունակեց աստվածային իր գործությունը ցույց փալը՝ մեռելներին հարություն փալով, հիվանդներին՝ բժշկություն, քաղցածներին՝ հաց, իր հրաշալի խոսքերով սգալորներին մխիթարեց և, վերջապես, Քրիստոս իր երեք փարիների քարոզությամբ կապարեց իր առաքելությունը երկրի վրա, որպես Փրկիչը հանուր մարդկության: Քրիստոսի անա-

պարի քառասնօրյա այդ պահեցողությունն է, որ Եկեղեցին շարունակում է Մեծ Պահքով մեր հավաքացյալների համար:

Սիրելիներ, պահոց քառասուն օրերը ինքնամաքման, աղոթքի, զղջման և ապաշխարության օրեր են: Այսօրվա ճաշոց գրքում բերված են Պողոս առաքյալի՝ Կոռնտացիներին ուղղված թղթի հետևյալ սրբառույչ խոսքերը. «Ձեզնից դուրս վանեցեք պոռնկությունը, պղծությունը, չարախոսությունը և ազահությունը, որ չարյաց մեծագույնն է: Եղեք նոր մարդ՝ նորոգվելով ըստ ձեր առաջին պարկերի, եղեք գթասիրտ, ողորմած, խոնարհ, հեզ ու համբերաբար նեղությունների ժամանակ, եղեք միշտ պարբաստ բարի, շինարար և աստվածահաճ գործերի» (Կող. Ե 5-12):

Այո՛, սիրելիներ, հարկ է ապրել ու գործել Մեծի Պահոց խորհրդով: Թող ձեր գործերը լինեն կենդանի ու փեսանելի: Միայն եկեղեցի գալ, ձեր երեսները խաչակնքել, մոմ վառել, խունկ ծխել, գանձանակը դրամ գցել բավարար չեն հավաքացյալների համար: Աստված պիտի ձեր լավ ու բարի գործերին վարձահատույց լինի, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում. «Հավաքեն առանց գործերի մեռած է»:

Նորից եմ կրկնում՝ մոմ վառել, խաչակնքել, գնալ ու այլևս մոռանալ՝ դա մեռյալ հավաքք է. կենդանի գործ է հարկավոր, իսկ ի՞նչ են այդ գործերը ձեզ համար: Այցելեցեք հիվանդանոցներ, հիվանդների հետ խոսեցեք Աստծո Արքայության մասին, այցելեցեք բանտեր, բանտարկյալներին հրավիրեցեք զղջման ու աղոթքի, ապաշխարությամբ վերանորոգելու իրենց հոգևոր կյանքը և աղոթելու, որպեսզի Բարեգութ Աստված ընդունի նրանց խնդրանքներն ու քաղցրությամբ կատարի: Մեր Եկեղեցին Բարեկենդանի օրը կատարում է սրբազան արարողություններ և փոնի համապարասխան շարականներ երգում, բայց լավ է, որ դուք նաև ձեր լումաներով օգտակար լինեք մեր եկեղեցիներին, սիրեք մեր Հայրենիքը, ծառայեք նրա հզորացմանն ու բարգավաճմանը:

Թող մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս իր շնորհները սփռի բոլորիդ սրտերի ու հոգիների վրա, որպեսզի կարողանաք գորացյալ հավաքքով լսել Աստծո խոսքերը, գործերով կատարել Նրա կենսաբար պատվերները: Ապրեցեք քրիստոնյային վայել հոգեկան մաքրությամբ, պարբաստ եղեք դիմավորելու Քրիստոսի Սուրբ Հարության հրաշափառ փոխը՝ փառքով, ցնծությամբ և ուրախությամբ:

«Շնորհ Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամեն»: